

Վ. ՀԱԿՈԲՅԱՆԻ «ԱՆՂԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ» ԲԱՌԱՐԱՆԻ ԲԱՌԱՐԱՆԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ*

Վանուհի Բաղդամյան

Բանալի բառեր՝ անգլերեն-հայերեն բառարանագրություն, երկլեզվյան բառարաններ, բառհոգված, թարգմանություն, հոմանշային շարք:

Սույն հոդվածում ներկայացնում ենք 1892 թ. Վ. Պոլսում լույս տեսած «Նոր բառարան անգլերենի հայերեն» աշխատության բառարանագրական արժեքը: Այն հեղինակել է պրոֆ. Վ. Հակոբյանը [1]: Առանձնանշելի է, որ բառարանի տիտղոսաթերթին հեղինակը նշել է միայն իր անվան սկզբնատառը, որի հետևանքով անգամ մատենագիտական ցանկերում նրա անունն արձանագրված է դարձյալ միայն սկզբնատառով:

Բառարանը վերահրատարակվել է 1907թ.: Այս փաստն ինքնին վկայում է Հակոբյանի բառարանի նկատմամբ եղած պահանջարկի մասին: Ցավոք, մինչ օրս քննվող աշխատանքի վերաբերյալ առանձին ուսումնասիրություններ չեն արվել, չեն ընդգծվել բառարանի արժանիքները, նորանուծությունները, երկլեզվյան հետագա բառարանագրության վրա թողած ազդեցությունները:

Մեր աշխատանքը նշյալ բառարանի ուսումնասիրության առաջին փորձն է:

«Բառարան անգլերենի հայերեն» աշխատությունը 19-րդ դարի՝ անգլերեն-հայերեն բառարանագրության վերջին խոշոր նվաճումն է: Մինչև այս աշխատանքի տպագրումը, անգլերենին և հայերենին առնչվող երկլեզվյան բառարանագրության մեջ ձևի և բովանդակության առումով անգերազանցելի էին Հ. Ավգերյանի հրատարակած աշխատանքները [2]:

Սակայն ժամանակի հետ այս լեզուների առնչություններն անխուսափելիորեն խորանում էին, երկու լեզուներում էլ կատարվում էին քերականական, բառապաշարային փոփոխություններ՝ կապված համայրումների, իմաստային տեղաշարժերի հետ, ուստի անհրաժեշտ էր տպագրել այնպիսի բառարան, որը կներառեր լեզվական այդ տեղաշարժերը:

Նկատենք, որ երկլեզվյան բառարաններում ուսումնասիրման առաջին լեզուն թարգմանականն է: Հարցին այս դիտանկյունով նայելիս նկատելի է, որ Վ. Հակոբյանի բառարանն առավելություն ունի Հ. Ավգերյանի բառարանի նկատմամբ: Ամենևին չստվերելով վերջինիս արժեքը՝ նշենք, որ չնայած Հ. Ավգերյանի աշխատանքը շատ կարևոր էր հայ բառարանագրության պատմության զարգացման գործում, այնուամենայնիվ, արդեն ուներ հնացած բառեր և քերականական ձևեր, որը բնական էր՝ կապված այն հանգամանքի հետ, որ 19-րդ դ. սկզբին՝ 1821 թ., աշխարհաբարն իր քերականական ու բառապաշարային համակարգով վերջնականորեն ձևավորված չէր: 1892 թվականին, երբ լույս տեսավ Վ. Հակոբյանի բառարանը, աշխարհաբարն արդեն կայուն հիմքերի վրա էր՝ զգալիորեն տարբեր դարասկզբի աշխարհաբարից:

Կարևորելով Մխիթարյան հայրերի՝ բառարանագրության գործում հրատարակչական մեծ ներդրումը և անձամբ Հ. Ավգերյանի աշխատությունը՝ գրքի Առաջաբանում Վ. Հակոբյանը հետևյալ հիմնավորումն է տալիս. «...սույն բառարանը թեև գործ հոյակապ է և աշխատայի, երեք քառորդ դար ծառայել է յետոյ, քանի ազգային գրականությունն կյառաջանար, լեզուն կը կսկուէր եւ կընդհանրանար, հետզհետե յարգէ կիյնային: Գիտական եւ արհեստական բացատրութիւնք յոյժ թերի էին, բոյս ինչ, ծառ ինչ է քար ինչ

* Հոդվածն ընդունվել է 20.10.21:

Հոդվածը տպագրության է երաշխավորել Բ.Գ.Դ., պրոֆեսոր Վ. Համբարձումյանը: 25.10.21:

կամ շատ շատ տուոնկ ինչ փշալից, ծաղիկ ինչ անուշահոտ եւն էն անդին չէին անցնէր» [3]:

Վ. Հակոբյանը կազմեց աշխարհաբար լեզվով առաջին անգլերեն-հայերեն բառարանը, որ ապահովեց բառարանի մատչելի կիրառելիությունը:

Բառարանագրական աշխատությունները հիմնականում հրատարակվում էին Վենետիկում՝ Մխիթարյանների ջանքերով: 19-րդ դ. վերջին Վ.Պոլիսը ևս դարձավ բառարանագրական աշխատանքների հրատարակության նկատելի կենտրոն: Եվ պատահական չէ, որ Վ. Հակոբյանի աշխատությունը լույս է տեսնում Վ.Պոլսում:

Այն լույս ընծայելու համար հեղինակից պահանջվեց մոտ 3 տարի:

Բառարանն ընդգրկում է շուրջ 55000 բառադրված: Նա կատարեց ճշգրտումներ, բառերի իմաստների բացատրություններն ավելի հստակ էին, գիտական ճիշտ սահմանումները՝ ապահովված:

Աշխատության սկզբում հեղինակի Առաջաբանն է, որում ներկայացնում է բառարանը կազմելու սկզբունքները, կարևորությունը, օգտագործած աղբյուրները և այլն: Հեղինակը շեշտում է, որ 19-րդ դ. հայերեն-ֆրանսերեն բառարանագրությունը ծաղկում էր, որը, իհարկե, շատ էր կարևոր, սակայն անգլերենը չպետք է «անդին» մնար:

Իր բառարանի անգլերեն մասի համար հեղինակը օգտվել է Վեբսթերի բառարանից (Webster's Condensed Dictionary):

Հայերեն բառաֆոնդի համար իբրև աղբյուր ընտրել է Հ. Ավգերյանի և Մ. Քաջունու բառարանները:

Առաջաբանից հետո հրատարակիչ Զ. Թորոսյանն ընթերցողներին ներկայացնում է հեղինակի կատարած գործի կարևորությունը:

Իբրև «բանալի»՝ ներկայացված են անգլերենի շեշտադրությանը և ծայնավորների արտասանությանը վերաբերող մի շարք կանոններ: Առանձին բացատրված են «ածանցական մասնիկը», նրանց նշանակությունները: Բուն բառացանկին նախորդում են նաև համառոտագրությունները:

Բառացանկը տրված է այբբենական կարգով, որից հետո առանձին էջով թարգմանում է օտարազգի, անծանոթ բառերը, արտահայտությունները: Առանձին ցանկով ներկայացնում է մի շարք համառոտագրություններ, որոնք գործում էին գրականության մեջ և մամուլում, ինչպես՝ Ed. Edition, Editor, Encyc. Encyclopedia, G.B. Great Britain, Geog. Geography:

Բառհոդվածն ունի հետևյալ կառուցվածքը. գլխաբառ, հայերեն տառադարձում, քերականական հատկանիշներ, թարգմանություն, երբեմն իմաստն ավելի հստակ թարգմանելու համար կան նաև բացատրական օրինակներ:

Ի տարբերություն Հ. Ավգերյանի բառարանի՝ այստեղ քերականական հատկանիշները տրված են անգլերեն համառոտագրությամբ, ինչպես՝ ad. Adverb, aa. Adjective and adverb: Սակայն բառիմաստի բնագավառի համառոտագրությունները հայերենով են, ինչպես՝ եկ. – եկեղեցական, դից. – դիցաբանական, տր. – տրամաբանական, տպ. – տպագրական ևն:

Բառերի տարբեր իմաստները միմյանցից անջատվում են անգլերենին հատուկ կետադրական նշանով՝ կետ-ստորակետով (;):

Բառհոդվածում իմաստները տրված են ոչ թե ըստ խոսքի մասերի, այլ՝ ըստ գործածվելու հաճախականության, որն ինքնին հետաքրքիր է:

Օրինակ՝ Answer էմ-սըր, va. Պատասխանել; հերքել, ջրել; վճարել=vn. Պատասխան տալ; յարմարիլ, պատշաճիլ; համապատասխանել; պատասխանատու ըլլալ; =տ. Պատասխան; լուծում չափ. To-well, Լավ յարմարիլ: -able, a. Պատասխանելի; պատասխանատու; վճարելի; յարմար; յաւասար: -less, a. Անպատասխանի:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2021

Օրինակից պարզ է դառնում, որ ավելի կիրառելի է եղել այս բառի պատասխանել թարգմանությունը, ապա՝ հերքել, ջրել, վճարել:

Նկատենք, որ այս սկզբունքի ճշգրտությունը ժամանակի ընթացքում փոխվում է: Կան իմաստներ, որ նախկինում այդքան էլ կիրառելի չեն եղել, ունեցել են նեղ գործածություն, հետագայում դրանք դառնում են գործածական, օրինակ՝ **Apart** էբարտ, ad. Ձատ, ուրոյն, առանձին: -ment, մ. Յարկաբաժին տալիք:

Եթե 19-րդ դ. այս բառի թարգմանություններից ավելի գործածական էր «Ձատ»-ը, ապա այժմ ավելի կիրառելի է «առանձին» իմաստը. Apart adv. 1. առանձին, մի կողմ, հեռու...[4]:

Կան բառեր, որոնց թարգմանության ընթացքում հայերեն համարժեքների հետ բերվում են նաև թուրքերեն համարժեքները, որ պայմանավորված է բառարանի գործածության վայրով:

Օրինակ՝ Apricot է՝ բրիքոտ, տ. Ծիրան; մահասիլ, գայիսի: -tree. Ծիրանի:

Arms արմզ pl. of Arm, Ջէնք; մարտ; Թշնամություն; կնքանշանք: Coat of-- , Ջինանշանք արմա: Stand of-- , Ջինուորին սարուածքը սիլահ թագընը:

Auditor ուտոր. Ունկնդիր, լսող; հաշուեքննիչ մուհասեպեճի:

Axil, -la Անութ գոյթուգ: -lar a. Անթային:

Հիշենք՝ բառարանը հրատարակվել է Կոստանդնուպոլսում, հետևաբար սա բնական է:

Նկատելի է, որ տեղի խնայողության համար օգտագործվել են տարբեր մեթոդներ: Այստեղ շատ են համառոտագրությունները: Նույն արմատով բառերը գրված են մեկ բառիողվածում. բառի ածանցման դեպքում այդ նույն արմատը չի գրվում, նրա փոխարեն դրվում է – նշանը, ապա՝ ածանցը:

Ինչպես՝ Banish. Va. Աքսորել, վտարել: -ment, տարագրում, վտար:

Indifferent. A. Անտարբեր, անհոգ; չէզոք, անկողմնակալ, անաչառ: -ism,

Անխտրականութ. -ly, ad. Անտարբեր, անխտիր, չափաւոր:

Ineffective, a. Տկար, ոչինչ, անազդեցիկ: -ly, ad. Ապարդին:

Բառարանն ունի նաև կառուցվածքային հետևյալ առանձնահատկությունը. խնայողության նպատակով երբեմն բառը տողադարձվում էր ոչ թե հաջորդ տող տանելով, այլ՝ նախորդ: Օրինակ՝

Accountant, տ.Տոմարակալ; հաշուագէտ: [ցընել;կցել:]

Accouple va. Միա-

Կային առանձին բառեր (հիմնականում բուսանուններ), որոնք Ավգերյանը հստակ չէր թարգմանել, իբրև բացատրություն՝ գրել էր՝ «բոյս ինչ», «է բոյս ինչ»: Վ. Հակոբյանը հստակեցրեց այդ բառերի թարգմանությունները: Նոր թարգմանությունները և Ավգերյանի բացատրությունների հետ տարբերությունները ներկայացնում ենք հետևյալ աղյուսակով:

Բառի նոր թարգմանություն	Վ. Հակոբյանի «Նոր բառարան անգլերէնէ հայերէն»	Հ. Ավգերյանի «Բառարան անգլիարէն եւ հայերէն»
պտեր իւֆթերի	Fern, Վայրի ծարխոտ, իմբըր, պտեր իւֆթերի: -owl. Խոյունուկ: Royal-. Ջրապտեր բս.	Fern, Բոյս ինչ (վայրի ծարխոտ):

Խառածադիկ, տերեփուկ	Bachelor. Ամուրի; պսակաւոր; ասպետ: -of Arts (B. A.) Պսակաւոր Արուեստից:-of Divinity (BD) Պսակաւոր Աստուածաբանութեան: -' – button, Խառածադիկ, տերեփուկ ընկալիչիչի: - ship, Ամուրութիւն:	Bachelors button գ. բոյս ինչ (թուփ Համասկիւր):
Բրդէ պաստառ	Baize Բրդէ պաստառ:	Baize գ. Ազգ ինչ ասուեայ:

Շատ բառերի թարգմանություններ Հ. Ավգերյանի մոտ բացատրվում են բառակապակցություններով, նախադասություններով, նկարագրություններով: Հիշենք՝ Վ. Հակոբյանը, հրաժարվելով բացատրական, թարգմանական նախկին ձևերից, ընտրեց բառի թարգմանությունը տալու հոմանշային ձևը: Նշենք այն հանգամանքը, որ բառարաններում հոմանշային բացատրության հետ կապված վեճ կա: Շեքսպիր, օրինակ, այն համոզմանն էր, որ հոմանիշները կարևոր ու պետքական են լեզուն խորապես ուսումնասիրող մարդու համար: Սակայն այն վնասակար է թարգմանական բառարանների համար [5]: Կան լեզվաբաններ էլ, որոնք կարծում են, որ հոմանիշների առատությունը խոսում է բառարանի արժեքի մասին:

Մեր կարծիքով երկու մոտեցումներն էլ ծայրահեղական են: Հոմանիշների կիրառությունը պետք է լինի ըստ անհրաժեշտության: Վ. Հակոբյանը կարողացել է պահել բառընտրության համաչափությունը: Այս եղանակով բազմաթիվ բառեր թարգմանվեցին ոչ թե բացատրություններով կամ նախադասություններով, այլ՝ մեկ բառով [6]: Այդպիսի օրինակներ են:

Երաշխավորելի [7]: Այս բառը Հ. Ավգերյանը բացատրում է այսպես.

Bailable ած. Չոր մարթ է ազատել կամ թողուլ հանդերձ երաշխավորութեամբ [8]:

Չկա ստույգ թարգմանություն [9]: Վ. Հակոբյանն այն տալիս է իբրև Bail բառի ածանցված ձև. Bail Երաշխավորութիւն; երաշխագիր; բռնատեղ (սանի): =va. (out) Բանտէն արձակել: -bond, Երաշխագիր: -able, a. Երաշխավորելի:

Գամկո: Այս բառը Հ. Ավգերյանի բառարանում թարգմանված է «Շուն մեծ» [10]: Վ. Հակոբյանի բառարանում Bandog Գամկո:

Չորանոց: Սա Barrack բառի թարգմանությունն է: Այն ունի նաև հյուղ իմաստը, որը տրված է նշյալ երկու բառարաններում էլ: Հ. Ավգերյանը, սակայն, նույնացնում է այս երկու բառերը՝ զինվորների տաղավար և զինվորների հյուղ. Barrack գ. Հիւղ կամ տաղաւար զինուորաց [11]: Վ. Հակոբյանը առանձնացնում է այդ իմաստները. Barrack Չորանոց, հիւղ:

Արքայաճարպ (այն հանդիպում է միայն այս բառարանում): Հ. Ավգերյանի մոտ առհասարակ այս եզրույթը չկա: Basilicon գ. Իղ ինչ բաղադրածոյ [12]: Այն հանդիպում ենք Վ. Հակոբյանի մոտ՝ Basilicon, Արքայաճարպ: Նույն բառը Վ. Գույումճյանը թարգմանել է այսպես. Basilicon գ. Արքայական սպեղանի [13]: Հ. Չաքմազճյանը տալիս է ավելի հստակ թարգմանությունը. Basilicon գ. Արքայական սպեղանի, չորեքդեղեան (մոմ, կուպր, թէտին եւ ձէթ) [14]: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բառը չի մտել գործուն բառաշերտ:

Նման բառերի ճշգրիտ թարգմանությունը հանգեցրեց հետևյալին. 4. Հակոբյանի բառարանով բազմաթիվ նոր բառեր հայտնվեցին լեզվում, որոնց մի մասը մտավ հայերենի գործուն բառաշարտ, մյուս մասը՝ ոչ:

Բառարանն ավարտվում է հատուկ անունների՝ անձնանունների շարքերով՝ առանձնացնելով տղամարդկանց և կանանց անունները: Առհասարակ 19-րդ դարի անգլերեն-հայերեն բառարաններում անձնանուններ առանձնացված չեն կամ առհասարակ չկան: Այստեղ հեղինակը ներկայացրել է հատուկ նշանակություն, բացատրություն ունեցող և թարգմանելի անուններ: Օրինակ՝

Aaron էփր՝ըն վսեմ, պերճ. Ահարոն

Abiel էպայ՝ել հայր զօրութեան. Աբիէլ

Daniel տէն՝իիլ Աստուածային

Երբեմն թարգմանության հետ տրված է նաև հայերեն համարժեքը:

Օրինակ՝

Myra մայ՝րա սգացող. Միրրա

Matilda, Mathilda մէտիլ՝տէ դիւցազնուհի. Մաթիլտ

Keturah քիտիուա՝րա խնկաբոյր. Քետուրա

Olive, Olivia ալ՝իվ, օլիվ՝իէ. Չիթենի L. Ոլիմպիա

Chloe քլօ՝է Նորաբողբոջ, Կլելիա

Կան այնպիսի անուններ էլ, որոնց միայն հայերեն համարժեքներն են տրված:

Ինչպես՝ Izabel, Izabella իզ՝էպէլ. իզըպէլ լա. Զապէլ, Եղիսաբեթ

Inez այ՝նիզ. Ազնէս

Evelina եվիլայ՝նա Եւա

Ophelia օֆիլ՝է օֆ. Ուփիլիա

Այսպիսով՝ ուսումնասիրելով 4. Հակոբյանի բառարանը՝ հանգում ենք հետևյալ եզրահանգումներին:

Սա անգլերեն-հայերեն առաջին աշխարհաբար բառարանն է: Աշխատությունն առաջինն էր, որ ճշգրտորեն ամբողջացրեց աշխարհաբարի բառաֆոնդը:

Հեղինակը թարգմանությունները կատարել է հիմնականում հոմանշային եղանակով: Թարգմանեց մի շարք բուսականներ և այլ տերմիններ, որ մինչ այդ չկային:

Բառարանի միջոցով հայերենի բառապաշարում տեղ են գտել մի շարք նոր բառեր, որոնցով հարստացել է բառապաշարը:

Այն առաջինն է անգլերեն-հայերեն թարգմանական բառարանների մեջ, որ անդրադարձավ հատուկ անունների՝ անձնանունների թարգմանություններին և հայերեն համարժեքներին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Նոր բառարան անգլիերէնէ հայերէն, յօրինեց բրոֆ. Կ. Յ. Յակոբեան, հրատարակիչ Զ. Թորոսեան», Կ. Պոլիս, տպ. Սերվիչէն, 1892:
2. Գ. Գասպարյանը Հ. Ավգերյանի՝ 1868 թ. Վենետիկում հրատարակած աշխատանքի մասին (1868 թ. Մադաթիա Պետրոսյանի վերամշակմամբ և խմբագրությամբ լույս է տեսնում այս բառարանի վերահրատարակությունը՝ Յ. Ավգերեան, Բառարան անգլիարէն եւ հայերէն, Վենետիկ, 1868) գրում է. «Անգլերենին առնչված բառարանի հեղինակային փաստական առաջնությունը թեկուզ պատկանում է Մկրտում Սիմեոնյանին, բայց Հարություն Ավգերյանի բառարանն իր բովանդակությամբ և բառարանագրական մշակման կողմով շատ բարձր է և ունի իրավական առաջնության իրավունք»: Գ. Գասպարյան, Հայ բառարանագրության պատմություն, Երևան, 1968, էջ 152:
3. Կ. Հակոբյան, Բառարան անգլիերէնէ հայերէն, Կ. Պոլիս, 1892:

4. Ասմանգուլյան Հ. Ա., Հովհաննիսյան Մ. Ի., Անգլերեն-հայերեն բառարան, Երևան, 1984, էջ 49:
5. Шерба. Л. В., Русско-французский словарь, Москва, 1939.
6. Հարկ է նկատել, որ նշյալ թարգմանությունների արդյունքը լեզվի բառաֆոնդի հարստացումն է:
7. Նկատենք սակայն, որ այս բառը կենսունակ չդարձավ. այն չի մտել հայերենի ամբողջ բառաֆոնդ ընդգրկող ամենախոշոր բառարանների մեջ, ինչպիսիք են Է. Աղայանի բացատրական բառարանը, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը (ԳԱԱ լեզվի ինստիտուտի հրատարակությամբ):
8. Ավգերյան Հ., Բառարան Անգղիարեն և հայերեն, էջ 59:
9. Սա ենթադրելի է, քանի որ այն չի հանդիպում նաև «Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի» (ՆՀԲ) և «Առձեռն բառարան հայկազեան լեզուի» ստվարածավալ աշխատություններում:
10. Ավգերյան Հ., Բառարան Անգղիարեն և հայերեն, Վենետիկ, 1868, էջ 61:
11. Նույն տեղում, էջ 63:
12. Նույն տեղում, էջ 64:
13. Գույումճյան Կ., Ընդարձակ բառարան անգլերենի և հայերեն, Կահիրե, 1981, էջ 117:
14. Չաքմազյան Հ., Ընդարձակ բառարան անգլերենի և հայերեն, Բոստոն, 1922, էջ 155:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Վ. Հակոբյանի «Անգլերեն-հայերեն» բառարանի բառարանագրական արժեքը Վանուիի Բաղրամյան

19-րդ դարի անգլերեն-հայերեն բառարանագրության մեջ արժեքավոր է Վ. Հակոբյանի «Անգլերեն-հայերեն» բառարանը: Այն լույս է տեսել Վ.Պոլսում 1892 թվականին: Աշխատության վերահրատարակումը (1907 թ.) խոսում է նրա նկատմամբ պահանջարկի մասին: Վ. Հակոբյանի աշխատությունն անգլերեն-հայերեն առաջին աշխարհաբար բառարանն է:

Աշխատության միջոցով թարգմանվեցին մի շարք տերմիններ: Հեղինակը հատուկ անդրադարձել է անձնանունների թարգմանությանը և նրանց համարժեքներին: Թարգմանությունները կատարվել են հիմնականում հոմանշային շարքերով: Այս բառարանի միջոցով մի շարք նոր բառեր ավելացան հայերենում, որոնց մի մասը մտավ գործուն բառաշերտ:

РЕЗЮМЕ

Словарная ценность англо-армянского словаря В. Акопяна Вануи Баграмян

Ключевые слова: англо-армянская лексикография, двуязычные словари, словарная статья, синонимический ряд.

Среди англо-армянских словарей особую ценность представляет словарь В. Акопяна. Он вышел в свет в 1892-ом году в Константинополе. Переиздание словаря (1907) свидетельствует о его востребованности. Труд В. Акопяна является первым англо-армянским словарём светского языка.

С помощью этого труда был переведён целый ряд терминов. Автор обратил особое внимание на перевод собственных имён и их эквивалентность. Переводы в основном

делались синонимическими рядами. С помощью этого словаря армянский язык обогатился рядом слов, часть которых вошла в активный запас.

SUMMARY

The Lexical Value of V. Hakobyan's English-Armenian Dictionary Vanuhi Baghramyan

Key words: English –Armenian lexicography, bio-lingual dictionary, keyword, translation, synonymous order.

In the English-Armenian lexicography of the 19th century the most valuable one is V. Hakobyan's dictionary. It was published in K.Polis in 1892. The republication of the work witnesses about the great demand towards it. V. Hakobyan's work is the first English-Armenian global dictionary.

Most part of terminology have been translated due to this work. The author took particular attention to the translation of the personal names and their equivalents. The translations were mostly done by means of synonymous order. By means of this dictionary many words were added to Armenian language, the most part of which was included in the active vocabulary.